



Արարատի մարզ, Արարատ, Շահումյան փող., 34 շենք
Էլ. հասցե: infoararat@aarhus.am, vigenchilingaryan@gmail.com
Հեռ.

N AA - 003

« 1 » հունիս 2014թ

ՀՀ տարածքային կառավարման
նախարարության ջրային տնտեսության
Կոմիտեի նախագահ
Անդրանիկ Անդրեասյանին

Հայաստանի Հանրապետություն, Երևան (0010),
Վարդանանց 13ա

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Անդրեասյան,

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին, խնդրում եմ Արարատի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն՝ Արարատի մարզի, Կախանովկա ձախ ճյուղի հողային հունի ջրանցքի վերաբերյալ, որը ջուր է մատակարարում Արմաշ, Արագա պոմպակայաններին, իրենից ներքև ինքնահոս ռոռզվող հողերին և Արմաշ կարպալճակայանի ձկնային տնտեսությանը:

1. 2004-2014 թվականներին կատարված ջրանցքի մաքրման պլանային և ոչ պլանային աշխատանքների հաճախականության, ծախսված գումարների մասին տեղեկատվություն:
2. Աղտոտվածության պատճառով հնարավոր ջրի կորուստների մասին տեղեկատվություն կամ փորձագիտական եզրակացություններ:
3. Ջրանցքի հարակից տարածքով անցնող դրենաժային համակարգի թույլատրելի հեռավորության մասին տեղեկատվություն :
4. Նույն ջրանցքի հողային հունին կից գտնվող մրգատու ծառերի և պոմպակայանի հարևանությամբ ցանկապատված տարածքների օրինականության մասին տեղեկատվություն:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալություն:

Արարատի Օրհուս կենտրոնի համակարգող՝

Վ. Չիլինգարյան

